



ՄԻԵԴ-ը քննության է ընդունել աշակերտի մահվան վերաբերյալ գործը

2015թ. հունիսի 17-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի կառավարությանն է հաղորդակցել [«Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի»](#) դիմումը՝ տասնամյա



աշակերտ Դերենիկ Գասպարյանի կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ: Աշակերտը մահացել էր ուսուցչի՝ դասարանից բացակայության ընթացքում համադասարանցիների կողմից ծեծի ենթարկվելուց հետո: Դիմողներին՝ Դերենիկի պապին եւ մորը ներկայացնում են [Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը](#) (Վանաձոր, Հայաստան) եւ [Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնը](#) (EHRAC, Լոնդոն, ՄԹ):

Դերենիկը սովորում էր Չարենցավանի թիվ 5 դպրոցի, չորրորդ դասարանում: 2010թ. հունիսի 5-ին, գրատախտակին գրելով աշակերտներին առաջադրվող հանձնարարությունները՝ ուսուցիչը լքել էր դասասենյակը՝ զրուցելու մեկ այլ ուսուցչի հետ: Իր բացակայության ընթացքում երկու աշակերտ ծեծի էին ենթարկել Դերենիկին, որից հետո նա ուշագնաց էր եղել եւ մահացել մինչ հիվանդանոց հասնելը: Դատաբժշկական փորձաքննությունը ցույց է տվել, որ Դերենիկը վաղուց տառապել էր մի շարք հիվանդություններով, որոնք իր ընտանիքին հայտնի չեն եղել: Փորձագետները եզրակացրել են, որ իր վատառողջ վիճակը, ինչպես նաեւ ստացված հարվածները կարող էին նպաստել նրա մոտ էպիլեպտիկ նոպայի առաջացմանը, ինչը հանգեցրել է մահվան: Նախաքննությամբ մահվան հանգամանքները չեն բացահայտվել: Ըստ նախաքննական մարմնի՝ ուսուցիչը չէր կարող նախատեսել Դերենիկի կյանքին սպառնող վտանգը դասասենյակից դուրս գալիս, իսկ Դերենիկի հետ վիճաբանած երկու աշակերտի հանդեպ քրեական հետապնդում չի իրականացվել, քանզի նրանք չէին հասել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքին՝ 16 տարեկանին:

ՄԻԵԴ-ին ուղղված իրենց դիմումում Դերենիկի ընտանիքը պնդում է, որ դպրոցի տնօրինությունն եւ ուսուցչական անձնակազմը չեն կարողացել պաշտպանել երեխայի կյանքի իրավունքը (ՄԻԵԿ 2-րդ հոդված) եւ որ իրավասու մարմինները չեն ապահովել երեխայի մահվան հանգամանքների արդյունավետ քննություն: Սույն դիմումը հաղորդակցելով՝ ՄԻԵԴ-ը ՀՀ կառավարությանն առաջադրել է հետևյալ հարցերը. (1) արդյո՞ք խախտվել է Դերենիկ Գասպարյանի կյանքի իրավունքը՝ հաշվի առնելով այն փաստը, որ երեխան մահացել է պետական (միջնակարգ) դպրոցում, եւ (2) արդյո՞ք ապահովվել է Դերենիկի մահվան հանգամանքների՝ ՄԻԵԿ 2-րդ հոդվածի ընթացակարգային կանոնների (արդյունավետ քննություն անցկացնելու պարտականություն) եւ ՄԻԵԿ 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:



European Human Rights Advocacy Centre

Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնի իրավական խորհրդական Վահե Գրիգորյանի կարծիքով.

ՀՀ կառավարությանն ուղղված՝ ՄԻԵԴ արագ արձագանքը ընդգծում է դպրոցի անձնակազմի պարտականությունների և պարտավորությունների հստակեցման անհրաժեշտությունը՝ ընդգծելով դպրոցականների անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Աշակերտների՝ կրթական հաստատությունների վերահսկողության ժամանակ և տակ գտնվելու վերաբերյալ հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում պատշաճ կարգավորում չունեն. այս գործը կարելի է համանման իրավիճակներում և դրանց կանխման նպատակով պետության և դրա ներկայացուցիչների իրավասությունների, պարտականությունների և դրանց անպատշաճ կատարման դեպքում՝ նաև նրանց պատասխանատվության հստակ օրենսդրական սահմանման և իրավակիրառ ոլորտում այդ պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը: